600.0029.19.06.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2001 թվականի №29
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի №44 և 1999 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №37 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «դ», 17-րդ հոդվածի «է», «ը» ենթակետերը և 41-րդ հոդվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի սեպտեմբերի 11-ի №44 որոշման 1-ին կետով հաստատված՝ «Շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առք ու վաճառքի)» պայմանագրի օրինակելի ձևում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

«ա» 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6.

Վճարման կարգը

6.1 Վաճառողի կողմից առաքված ջերմային էներգիայի արժեքը որոշվում է ջերմային էներգիայի առք ու վաճառքի ակտի հիման վրա: Ամենամսյա վճարման ենթակա գումարը հաշվարկվում և ամրագրվում է փոխադարձ ակտով:

6.2 Ելնելով ջերմային էներգիայի առք ու վաճառքի ակտից, Վաճառողը կազմում և մինչև հաջորդ ամսվա 5-ը Գնորդին է ներկայացնում վճարման փաստաթուղթ, որտեղ նշվում է տվյալ ամսվա ընթացքում վճարման ենթակա ընդհանուր գումարը:

6.3 Գնորդը պարտավոր է վճարման փաստաթուղթն ստանալու օրվանից հաշված՝ 20 (քսան) օրվա ընթացքում վճարման ենթակա գումարը փոխանցել Վաճառողի բանկային հաշվեհամարին: Սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վաճառողը կարող է հիշեցման կարգով (գրություն, հեռախոսագիր, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն) Գնորդին զգուշացնել վճարման ուշացման մասին: Նշված ժամկետում ապառքը չմարելու դեպքում Վաճառողը գնորդին տույժ է վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի --------%-ի չափով (բայց 0.1%-ից ոչ ավելի):

Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել հաշվարկային ամսում վճարման ենթակա ընդհանուր գումարի 10%-ը:

6.4 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Կողմերի համաձայնությամբ՝ նախատեսված տույժերը կարող են չկիրառվել կամ զիջվել»:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի դեկտեմբերի 28-ի № 37 որոշմամբ հաստատված՝ «էլեկտրաէներգիայի առուվաճառքի՝ արտադրող-մեծածախ գնորդ-վաճառող» պայմանագրի օրինակելի ձևում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

«ա» պայամանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Վճարման կարգը

5.1. Վաճառողի կողմից առաքված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտի հիման վրա: Ամենամսյա վճարման ենթակա գումարը հաշվարկվում և ամրագրվում է փոխադարձ ակտով:

5.2. Ելնելով էլեկտրաէներգիայի առուվաճառքի ակտից, Վաճառողը կազմում և մինչև հաջորդ ամսվա 5-ը Գնորդին է ներկայացնում վճարման փաստաթուղթ, որտեղ նշվում է տվյալ ամսվա ընթացքում վճարման ենթակա ընդհանուր գումարը:

5.3. Գնորդը պարտավոր է վճարման փաստաթուղթն ստանալու օրվանից հաշված՝ 20 (քսան) օրվա ընթացքում վճարման ենթակա գումարը փոխանցել Վաճառողի բանկային հաշվեհամարին: Սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Վաճառողը կարող է հիշեցման կարգով (գրություն, հեռախոսագիր, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն) Գնորդին զգուշացնել վճարման ուշացման մասին: Նշված ժամկետում ապառքը չմարելու դեպքում Վաճառողը գնորդին տույժ է վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի --------%-ի չափով (բայց 0.1%-ից ոչ ավելի):

Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել հաշվարկային ամսում վճարման ենթակա ընդհանուր գումարի 10%-ը:

5.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Կողմերի համաձայնությամբ՝ նախատեսված տույժերը կարող են չկիրառվել կամ զիջվել»:

3. Հանձնարարել լիցենզավորված ընկերություններին՝ 15-օրյա ժամկետում նշված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ դրանք համապատասխանեցնելով սույն որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ